տուաւ, և այժմ որ վէզիր լեալ և յարքունիս մտեալ՝ նոյնպէս ոչ տուաւ, և այսու մոռացուցանէր. և երկրորդ՝ նախանձ ժողովրդեան և կաթողիկոսին արար, զի նա ըստակ բազում ժողովեաց և սորա ոչ տուին, վասն որոյ և մատնութիւն առնէր հանապազ զի մի առցեն յիւրմէ ըստակ կամ մազուլ արասցեն։ Եւ երկրորդ պատճառ ասացաւ, զի առանց գրոյ և հրամանի արարին, քանզի ետուն՝ թէ տուն շինեսցի, և ի տիւան թէսքէրէսին այսպէս գրեալ, զոր և ծանոյց տէֆտէրտար վէզիրի և նա առաքեաց պույրուլթի առ զատին չաւուշով, և առ ընդ նմա քեաթիպ և չաւուշ ի թէֆթիշ և գրեցին ի նմա զմէհրապան ուր և գտին ինչ՝ եթէ զիրք եւ անօթ եւ փափազ զաֆթանիք եւ թէվսիր՝ ուրոյն ուրոյն առ յեկեղեցիսն. և մահալէլիս կոչեալ ի վկայութիւն, Ասացէք թէ Փափազք ճէմաաթով եկին յաղօթս. և նոքա ասացին և նոքա գրեցին։ Եւ մօհրեցին զեկեղեցիսն և առեալ տարան զգիրն, արարին հօճէթ յանուանէ իւրաքանչիւրոցն եկեղեցեաց և ետուն առ վէզիրն. և զաւուրս ԺԴ այսպէս կացաւ կնքով և ոչ կարացին բան մի հոգալ Յունք կամ Հայք՝ երկուցեալ յոյժ յառաջադէմն յայնցանէ, և յետոյ որ երկարումն ինչ ետուր, ասացին, կամ լռելեան եթող հարցեալ ի մեծամեծս, կամ դրամ ինչ կամի առնել։ Եւ նախարարք իւր ևս չկարէին յիշատակել, զի մի պատժեսցին[1]) ի նմանէ, և հարցանողացն ասէին՝ Վերջն բարի է։ Նախարարք դողային, կաշառառուքն սարսէին, շինողք սարսափէին, ռամիկք երկնչէին։ Եւ յեղակարծ ժամու անկարծապէս իբրև զծով հարեալ ի հողմոց և խիստ մրրկեալ՝ առաքեալ չաւուշս հանդերձ հրամանաւ առ զատի, և նոքա մուհսուրով ժ–ամբ կալեալ յանցս ճանապարհին

1) պատժեսցի.